Կալիֆորնիայի Զարգացման ծառայությունների վարչություն
Յաճախակի տրվող հարցեր (FAQs)
Վերջին թարմացումը՝ 10/18/2024թ.

ՀՏՀ LANTERMAN ACT-ՈՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այս ՀՏՀ-ները նպատակ ունեն պատասխանել ընդհանուր հարցերի: Եթե դուք ունեք երեխայի հետ կապված հատուկ հարց կամ մտահոգություն, խնդրում ենք կապվել ձեր տարածաշրջանային կենտրոնի գործերի կառավարչի հետ: Եթե դուք աջակցության կարիք ունեք կապված ճիշտ տարածաշրջանային կենտրոն գտնելու հարցում, ապա հավանական է, որ այս հղումով կգտնեք անհրաժեշտ տեղեկատվություն https://www.dds.ca.gov/rc/listings/: Ցանկացած հարցի կամ մտահոգության վերաբերյալ դիմեք Questions@dds.ca.gov էլ.հասցեով:

Հ1. Ի՞նչ է նշանակում լինել Lanterman Act-ի ժամանակավոր շահառու:

Պ1. Նորածնից մինչև 5 տարեկան երեխաները տարածաշրջանային կենտրոններում կարող են դառնալ ժամանակավոր շահառու, եթե ունեն.

1. Հաշմանդամություն, որը չունի միայն ֆիզիկական բնույթ, և
2. Զգալի ֆունկցիոնալ սահմանափակումներ հիմնական կենսագործունեության առնվազն երկու ոլորտներում այնպես, ինչպես սահմանված է տարածաշրջանային կենտրոնի կողմից՝ երեխայի տարիքին համապատասխան.
   - Ինքնախնամում:
   - Ընկալունակ և արտահայտիչ լեզու:
   - Ուսուցում:
   - Շարժունակություն:
   - Ինքնուղղորդում:

Հ2. Ինչպիսի՞ն պետք է լինի իմ երեխան, որպեսզի Lanterman Act-ի համաձայն դառնա ժամանակավոր շահառու:

Պ2. Նորածնից մինչև 5 տարեկան:

Հ3. Արդյո՞ք Lanterman Act-ի համաձայն ժամանակավոր իրավասությունը «Վաղ մեկնարկի» ծրագրի շարունակությունն է: Կարո՞ղ է արդյոք իմ երեխան շարունակել ստանալ նույն ծառայությունները, որոնք նա ստացել է «Վաղ մեկնարկի» ծրագրի միջոցով:

Պ3. Ժամանակավոր շահառու լինելը «Վաղ մեկնարկի» երկարաձգում չէ: «Վաղ մեկնարկը» ավարտվում է 3 տարեկանում և չի կարող շարունակվել՝ ելնելով դաշնային և նահանգային օրենքներից և կարգավորող փաստաթղթերից:

Հ4. Իմ երեխան ներկայումս օգտվում է «Վաղ մեկնարկից»: Ինչպե՞ս են նրանք ժամանակավորապես իրավասու դառնում Lanterman Act-ի ծառայությունների համար:

Պ4. Ժամանակավոր շահառուների հարցով կապվեք ձեր երեխայի ծառայությունների համար նշանակված համակարգողի հետ: IFSP թիմն օգտագործելով զարգացման գնահատումների ամենավերջին ցուցանիշները կամ առաջընթացի հաշվետվությունները՝ կորոշի, թե արդյոք ձեր երեխան համապատասխանում է Lanterman Act-ի ժամանակավոր իրավասությանը:

Հ5. Ի՞նչ անել, եթե իմ երեխային մերժեն Lanterman Act-ի ժամանակավոր իրավասությունը:

Պ5. Եթե իրավասությունը կամ ծառայությունները մերժվում են, ապա արդար դատավարական լսումների գործընթացը տարածաշրջանային կենտրոնի և սպասարկվող անձանց միջև տարաձայնությունները լուծելու միջոց է: Արդար լսումների գործընթացում տարաձայնությունները կարող են կապված լինել ծառայությունների, իրավասության կամ տարածաշրջանային կենտրոնի ցանկացած որոշման կամ գործողության հետ, որի հետ դուք համաձայն չեք: Արդար լսումների գործընթացը կարող է ներառել ոչ պաշտոնական հանդիպում, միջնորդություն և պետական մակարդակով լսումներ Վարչական դատավորի հետ: Արդար լսումների գործընթացի մասին տեղեկատվությունը, գրքույկը և արդար լսումների համար անհրաժեշտ ձևաթղթերը հասանելի են ձեր տեղական տարածաշրջանային կենտրոններում կամ կարող եք դրանք գտնել այստեղ՝ Արդար լսումների բողոքարկման գործընթաց - Կալիֆորնիա Զարգացման ծառայությունների վարչություն

Հ6. Եթե հաստատվի, որ իմ երեխան Lanterman Act-ով ժամանակավոր շահառու է, ի՞նչ ծառայություններ է նա ստանալու:

Պ6. Եթե որոշվի, որ նա Lanterman Act-ով ժամանակավոր շահառու է, երեխան կստանա ծառայություններ՝ ելնելով իր կարիքներից: Տարածաշրջանային կենտրոնի ծառայությունների և աջակցության մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել այստեղ՝ Տարածաշրջանային կենտրոնի ծառայություններ և նկարագրություններ - Կալիֆորնիայի Զարգացման ծառայությունների վարչություն: Եթե ձեր երեխան 3 տարեկանից փոքր է, ապա այս ծառայությունները նա կստանա ի հավելումն «Վաղ մեկնարկի» ծառայությունների:

Հ7. Ծառայությունների ի՞նչ ծրագիր կմշակվի իմ երեխայի համար, ով Lanterman Act-ով ճանաչվել է ժամանակավոր շահառու:

Պ7. Եթե ձեր երեխան 3 տարեկանից փոքր է, ծառայությունները կհամակարգվեն Անհատականացված ընտանեկան ծառայության պլանի (IFSP) միջոցով: 3 տարեկանից փոքր երեխաների համար «Վաղ մեկնարկի» ծրագրի մասին առավել մանրամասն, ներառյալ IFSP-ի գործընթացի մասին կարող եք տեղեկանալ այստեղ. Վաղ մեկնարկ. Կալիֆորնիայի Զարգացման ծառայությունների վարչություն:

Եթե ձեր երեխան 3-4 տարեկան է, Անհատական ծրագրի պլան (IPP) կմշակվի: Անհատական ծրագրի պլանի (IPP) մասին կարող եք առավել մանրամասն ծանոթանալ այստեղ՝ Անհատական ծրագրի պլանավորում. Կալիֆորնիայի Զարգացման ծառայությունների վարչություն:

Հ8. Իմ երեխան իրավունք ստացավ օգտվել տարածաշրջանային կենտրոնի ծառայություններից ժամանակավոր շահառու: Արդյո՞ք նա իրավասու է գրանցվելու Medi-Cal-ի նպաստներին 1915(c) Տնային և համայնքային ծառայությունների (HCBS) հրաժարման միջոցով:
Պ8. Դա կախված է. Երեխան կարող է ընդգրկվել HCBS Հրաժարումում, եթե նա բավարարում է Հրաժարման պահանջները, ինչպիսիք են մասնագիտացված խնամքը հաստատությունում կամ երեխայի հաշմանդամության հետևանքով գործառույթային սահմանափակումները, և եթե երեխայի համար պահանջվում է մեկ կամ մի քանի Հրաժարման ծառայություններ: Օրինակ, երեխան, որը 33 կամ ավելի տոկոսով հապաղում է զարգացման երկու ոլորտներում, կարող է բավարարել խնամքի պահանջվող մակարդակը: Հավելյալ տեղեկություններ կարելի է գտնել այստեղ՝ https://www.dds.ca.gov/wp-content/uploads/2019/02/HCBS_WaiverPrimerPolicy_20190212.pdf

Հ9. Իմ երեխան, ով Lanterman Act-ի ժամանակավոր շահառու է, արդյո՞ք որակավորվում է մասնագիտական ծառայություններից օգտվելու գնահատման համար:
Պ9. Եթե երեխան համապատասխանում է 1915(c) Տնային և համայնքային ծառայությունների հրաժարման պահանջներին, որոնք նշված են թիվ 8 հարցում, ապա նա կարող է որակավորվել մասնագիտական ծառայություններից օգտվելու գնահատման համար:

Հ10. Եթե հաստատվի, որ իմ երեխան Lanterman Act-ով ժամանակավոր շահառու է, արդյո՞ք նա իրավասու կլինի ծառայություններ ստանալու Ինքնուրույնության ծրագրի (SDP) միջոցով:
Պ10. Ոչ, երեխաները, որոնք Lanterman Act-ով որոշված են որպես ժամանակավոր շահառուներ, չեն համապատասխանում SDP-ին: Անհատը պետք է համապատասխանի Սոցիալական ապահովության և հաստատությունների մասին (W&I) օրենսգրքի, Բաժին 4685.8(d)(1) չափանիշներին SDP ծրագրի մաս լինելու համար, որը, ինչպես նշված է՝ ներառում է ախտորոշված զարգացման սահմանափակում:

Հ11. Որպես Lanterman Act-ի ժամանակավոր շահառու իմ երեխան ստանում է ծառայություններ տարածաշրջանային կենտրոնից: Ի՞նչ տեղի կունենա, երբ լրանա նրա 5 տարեկանը:
Պ11. Տարածաշրջանային կենտրոններից պահանջվում է գնահատել ձեր երեխային հինգ տարեկան դառնալուց առնվազն 90 օր առաջ՝ որոշելու համար, թե արդյոք նա համապատասխանում է տարածաշրջանային կենտրոնի շարունակական ծառայություններին 5 տարեկանից հետո: Այս գնահատումը կորոշի, թե արդյոք ձեր երեխան ունի զարգացման հաշմանդամություն, ինչպես սահմանված է Սոցիալական ապահովության և հաստատությունների մասին օրենսգրքի 4512(a)(1) բաժնում: Եթե տարածաշրջանային կենտրոնը որոշի, որ ձեր երեխան չունի զարգացման հաշմանդամություն, ապա ծառայությունները կդադարեցվեն 5 տարեկանում:

Հ12. Իմ երեխան Lanterman Act-ով ծառայությունների ժամանակավոր շահառու է և նրա 5 տարեկանը լրանալուն մնացել է 90 օրից քիչ օրեր, բայց ինձ հետ դեռ կապ չեն հաստատել: Ի՞նչ պետք է ես անեմ:
Պ12. Կապվեք ձեր երեխային նշանակված ծառայության համակարգողի հետ:

Հ13. Ի՞նչ տարբերություն կա Lanterman Act-ով ծառայությունների շահառու և Lanterman Act-ով ծառայությունների ժամանակավոր շահառու լինելու միջև:
Պ13. Ժամանակավոր շահառուն կարճաժամկետ ծառայություն է, որը գործում է մինչև երեխայի հինգ տարեկանը լրանալը, իսկ Lanterman Ac-ով շահառուն՝ ոչ:
Համապատասխանության չափանիշները տարբերվում են: Երեխայի համար հասանելի ծառայությունների ցանկի մեջ տարբերություն չկա, սակայն այն ծառայությունները, որոնք երեխան ստանում է, անհատականացված են՝ ելնելով նրա յուրահատուկ կարիքներից: Այս ծառայությունները նկարագրված կլինեն երեխայի IFSP-ում կամ IPP-ում:

Հ14. Կարո՞ղ է արդյոք իմ երեխան ժամանակավոր շահառու դառնալ նույնիսկ այն դեպքում, եթե նա ծառայություններ չի ստացել «Վաղ մեկնարկի» շրջանակում:
Պ14. Այո, 3 և 4 տարեկանում տարածաշրջանային կենտրոն ուղարկված երեխաներն, ովքեր չեն ստացել «Վաղ մեկնարկի» ծառայություններ մինչև 3 տարեկանը, կարող են որակավորվել Lanterman Act-ով ժամանակավոր շահառու մինչև 5 տարեկանը, եթե նրանք համապատասխանում են սահմանված չափորոշիչներին: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կապվել ձեր տեղական տարածաշրջանային կենտրոնի հետ՝ https://www.dds.ca.gov/rc/listings/: